ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2016թ. թիվ 152-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 424-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1204-Ն որոշման պահանջների, համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Վահե Դոխոյանին:

2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին՝

1) Ապահովել «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը:

2) Տեղեկատվություն փնտրողին մատչելի ձևով պարզաբանել տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը:

3) Մշակել ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. դեկտեմբերի 1-ի թիվ 424-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. մայիսի 23
ք.Վանաձոր